Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության, հանրային մասնակցության, բարեվարքության և լավ կառավարման վերաբերյալ առաջարկություններ

Հանրային մասնակցությունը Երևան քաղաքի բյուջետային գործընթացներում խթանելուն ուղղված առաջարկություններ

- Հստակ սահմանել բյուջեի հետ կապված որոշումների կայացմանը հասարակության մասնակցության ձևաչափը և կանոնները:
- Մշակել հստակ ուղեցույցներ, որոնց օգնությամբ քաղաքացիները կարող են իրենց ներդրումն ունենալ բյուջեի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:
- Միակողմանի հաղորդակցման մոտեցումից անցնել դեպի խորհրդակցություն, համագործակցություն և համատեղ որոշումների կայացում:
- Ստեղծել առցանց հանրային ֆորումներ, խորհրդակցություններ և մասնակցային բյուջետային հանդիպումներ, որտեղ քաղաքացիների առաջարկները վերանայվում և քննարկվում են:
- Անցկացնել առցանց հանրային լսումներ, ուղիղ հեռարձակվող բյուջեի քննարկումներ և հարցումներ՝ ավելի լայն ներգրավվածություն ապահովելու համար:
- Մշակել հատուկ թվային պորտալ, որտեղ բնակիչները կարող են առաջարկել բյուջեի առաջնահերթությունները, հետևել ծախսերին և մասնակցել քննարկումներին:
- Ընդլայնել թվային ներգրավման գործիքները, ինչպիսիք են ինտերակտիվ բյուջեն կամ հանրային հետադարձ կապի մեխանիզմները, սոցիալական հարթակները, առցանց հարցումները:
- Հատուկ բյուջե հատկացնել մասնակցային գործընթացներին՝ ապահովելու քաղաքացիների բովանդակալից ներգրավվածությունը:
- Պատրաստել և անցկացնել մասնակցային գործընթացներին առնչվող կարողությունների զարգացման սեմինարներ քաղաքապետարանի աշխատակազմի համար:
- Վերապատրաստել հանրային պաշտոնյաներին քաղաքացիների ներգրավվածության, թափանցիկության և ներառական որոշումների կայացման լավագույն փորձի վերաբերյալ:
- Պատշաճ ծանուցել բյուջեի քննարկումների մասին՝ քաղաքացիներին տալով բավարար ժամանակ փաստաթղթերը վերանայելու և տեղեկությունները պատրաստելու համար:
- Օգտագործել բազմաթիվ խողովակներ (SMS ծանուցումներ, էլ. նամակներ, սոցիալական լրատվամիջոցներ, սոցիալական գովազդներ)՝ քաղաքացիներին

հանրային լսումների և մասնակցության հնարավորությունների մասին ծանուցելու համար:

- Կանխել թաղապետարանների կողմից հանրային լսումներին մասնակցության իմիտացիան, որոնց հիմանակնում մասնակցում են միայն թաղապետարանների աշխատակիցները, նրանց հարազատներն ու ծանոթները:

- Թույլատրել հանրային քվեարկություն բյուջեի հատուկ առաջնահերթությունների վերաբերյալ՝ տալով նրանց անմիջական ազդեցության հնարավորություն քաղաքի ծախսերի մի մասի վրա:

- Ստեղծել քաղաքացիներից կազմված խորհրդատվական հանձնաժողովներ՝ բյուջեի պլանները վերանայելու և կատարողականը վերահսկելու համար:

- Ներդնել անկախ մոնիտորինգային մեխանիզմներ, քաղաքացիական հասարակության գործընկերություններ կամ արտաքին աուդիտորներ՝ մասնակցային գործընթացները վերահսկելու համար:

- Բյուջետավորման մեջ քաղաքացիների ներգրավվածության արդյունավետության վերաբերյալ իրականացնել պարբերական գնահատումներ և հանրային հաշվետվություններ:

- Բյուջեի հետ կապված հարցերում թույլ տալ ավելի մեծ ներգրավվածություն ունենալ տարբեր խմբերին, ներառյալ սոցիալապես խոցելի խմբերին, հաշմանդամություն ունեցող անձանց և սահմանափակ տեխնիկական գիտելիքներ ունեցողներին:

- Հավաքագրել տարբեր գաղափարներ և տվյալներ, որոնք կարող են հանգեցնել Երևան քաղաքի և նրա վարչական շրջանների կարիքներին ավելի լավ տեղեկացվածությանը:

Երևանում որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցությունը և թափանցիկությունը ապահովելու վերաբերյալ առաջարկություններ

- Քաղաքապետարանի կայքում ստեղծել առանձին բաժին՝ լսումների/քննարկումների վերաբերյալ հայտարարությունների, դրանց ժամանակացույցի, օրակարգի, մասնակցության կարգի և արձանագրությունների հրապարակման համար:
- Օրենսդրորեն ամրագրել լսումների արձանագրությունների հրապարակման պարտադիր ժամկետ, օրինակ՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Առաջարկել գործնական մեթոդներ հանրային մասնակցության բարձրացման և հանրային լսումների մատչելիության ապահովման համար՝ խուսափելով լսումներ անցկացնել արձակուրդների ընթացքում, այդ թվում՝ կազմակերպելով դրանք ոչ աշխատանքային օրերին կամ երեկոյան ժամերին, իրականացնելով էլեկտրոնային ծանուցում շահագրգիռ կողմերին, ինչպես նաև կիրառելով առցանց հարթակներ և առաջարկելով առցանց մասնակցության հնարավորություններ (օրինակ՝ Zoom, Teams):
- Կարգավորել համընդհանուր կիրառելիության որոշումների կայացման գործընթացը, ինչպիսիք են տրանսպորտային բարեփոխումները, աղբահանության վճարի փոփոխությունները և այլ նմանատիպ որոշումները, սահմանելով հստակ իրավական

մեխանիզմներ՝ հանրային լսումների և քննարկումների պարտադիր իրականացման համար:

- Սահմանել հետադարձ կապի պարտադիր մեխանիզմ՝ պարզաբանելով, թե որ առաջարկներն են ընդունվել կամ մերժվել, և ինչու: Տրամադրել վիճակագրություն՝ ներկայացված, ընդունված և մերժված առաջարկների քանակի վերաբերյալ:
- Իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ օգտագործելով տեղական ԶԼՄ-ներ, սոցիալական ցանցեր և կազմակերպելով համայնքային միջոցառումներ՝ բարձրացնելու բնակիչների իրազեկվածությունը մասնակցության հնարավորությունների, «Ակտիվ քաղաքացի» հարթակի գործառույթների, ինչպես նաև հանրային լսումների և քննարկումների գործընթացների վերաբերյալ՝ խթանելու նրանց ակտիվ ներգրավվածությունը:
- Ստեղծել շահագրգիռ կողմերի ոլորտայի շտեմարաններ՝ ներառելով ՔՀԿ-ներ, խոցելի խմբերի ներկայացուցիչներ, մասնագիտական կազմակերպություններ, անհատ փորձագետներ, բուհեր և ինստիտուտներ՝ նրանց ծանուցելով որոշումների նախագծերի մասին:
- Որոշումների ընդունման նախնական փուլում, երբ դեռ հնարավոր է ազդել որոշումների բովանդակության վրա, կազմակերպել թիրախային խորհրդակցություններ ՔՀԿ-ների, խոցելի խմբերի և ազդակիր համայնքի, մասնագիտական կազմակերպությունների, անհատ փորձագետների, բուհերի և մասնագիտացված ինստիտուտների հետ:
- Մշակել որոշումների կայացման գործընթացում հանրային իրազեկման և մասնակցության ապահովման վաղ փուլերի ուղեցույցներ՝ ներառելով կոնկրետ գործողությունների ցանկ, ծանուցումների ձևաչափ և ժամկետներ:
- Քաղաքապետարանի կայքում և սոցիալական մեդիայում ստեղծել առանձին բաժին՝ քաղաքապետին կից հանրային խորհուրդների գործունեության, կազմի, նրանց հետ կապվելու հնարավորությունների և մասնակցության կարգի վերաբերյալ տեղեկատվությամբ:
- Հանրային խորհուրդների գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հրապարակել նիստերի ժամանակացույցը և արձանագրությունները քաղաքապետարանի կայքում:
- Օգտագործել «Ակտիվ քաղաքացի» հարթակը հանրային կարևորություն ունեցող նախագծերի քննարկման համար: Իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ բարձրացնելու բնակիչների մասնակցությունը «Ակտիվ քաղաքացի» հարթակի աշխատանքներին:
- Սահմանել վարչական պատասխանատվություն՝ հանրային մասնակցության պահանջների խախտման համար:

Երևանի Տեղական ինքնակառավարման մարմինների լավ կառավարմանն ուղղված առաջարկություններ

- Հրապարակել ավագանու մշտական հանձնաժողովների օրակարգը, դրա հետ կապված նախագծերը, կցված փաստաթղթերը, նիստերի արձանագրությունները և համապատասխան կարծիքները:

- Բացառել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու հայեցողական մոտեցումը: Հստակեցնել ավագանու և հանձնաժողովի նիստերին, ավագանու հարցերին քվեարկության մասնակցության արձանագրելու մեխանիզմները:

- Ընդլայնել ավագանու նիստերին մասնակցության հնարավորությունները՝ ներառելով ՔՀԿ-ներին և մասնագիտացված կազմակերպություններին:

- Նվազեցնել քաղաքապետի, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, վարչական շրջանների ղեկավարի, Երևանի ենթակայության կազմակերպությունների կողմից ավագանու մշտական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ տրամադրման պարտավորության շեմը և հնարավորություն տալ ավագանու մեկ անդամի պահանջի դեպքում էլ տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ:

- Վերանայել հանձնաժողովների ղեկավարների և տեղակալների պաշտոնների բաշխման Դոնթի բանաձևը և ներդնել պաշտոնների բաշխման առավել համամասնական մեխանիզմ:

- Բարձրացնել հանձնաժողովի նիստի քվորումի շեմը գործող կազմի 1/4ից 1/2-ի:

- Վերանայել քաղաքապետի տեղակալների ավագանու նիստերին արտահերթ ելույթ ունենալու իրավունքը՝ սահմանափակելով միայն առաջանի տեղակալի լիազորությամբ:

- Վերանայել զեկուցվող-չզեկուցվող հարցերի կարգավիճակին առնչվող դրույթները, հնարավորություն տալով ավագանու անդամներին տարբերակված դիրքորոշում ունենալ առանձին հարցերի նկատմամբ:

- Թափանցիկ և հաշվետու տարձնել քաղաքապետին և վարչական շրջանների ղեկավարներին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության գործընթացը՝ վերջիններիս անդամների ցանկերն ու նիստերի արձանագրությունները հրապարակելու միջոցով

- Թափանցիկ և հաշվետու դարձնել քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունը դրանց կազմերի ու անդամների կենսագրությունների հրապարակման միջոցով:

- Քաղաքապետարանի կայքում ՏԻՄ իրավական ակտերը տեղադրել ըստ համապատասխան փոփոխությունների, խմբագրումների և ինկորպորացիաների, ինչպես նաև ցուցադրել առնչություններն այլ իրավական փաստաթղթերին, բարձրացնել որոնման արդյունավետությունը:

- Սահմանադրությամբ ամրագրված իրավական և մասնագիտական հսկողության մեխանիզմները կիրառել ամբողջական և հետողական կերպով:

- Հստակեցնել ավագանու նիստը վարողի կողմից ավագանու նկատմամաբ սանկցիաների կիրառման հանգամանքները համաձայն ավգանու Կանոնակարգի 82-րդ կետի:

- Վերանայել ավագանու նիստի ընթացքում ավագանու կողմից տեխնիկական միջոցների (համակարգիչ, հեռախոս, տեսախցիկ և այլն) միայն նիստը վարողի կողմից օգտագործման թույլտվության հայեցողական կարգավորումը:

- Ավագանու կանոնակարգում նախատեսել դրույթ, առ այն, որ խմբացակայության ղեկավարի բացակայության դեպքում լիազորությունները կարող է կատարի խմբակցության քարտուղարը:

- Հստակեցնել վարչական շրջանի ղեկավարի տեղակալի և օգնականի կարգավիճակները՝ վերացնելով օրենսդրական գործող հակասությունները:

- Քաղաքապետարանի կայքէջում քաղաքապետի, վարչական շրջանների ղեկավարների հանդիպումների վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել առավել բավանդակային և թափանցիկ:

- Ավագանու անդամների և համայնքային մյուս պաշտոն զբաղեցնողների կենսագրականները լրացնել վերջիններիս աշխատավայրերի և առանձին կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ տեղեկատվությամբ:

- Ընտրողների և ավագանու անդամների կապն ապահովելու համար ավագանու անդամներին տրամադրել ծառայողական հեռախոսահամարներ և էլեկտրոնային հասցեներ: Կայքում հասանելի դարձնել ավագանու անդամների հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեները, ինչպես նաև խմբակցությունների փորձագետների և գործավարների կոնտակտային տվյալները:

- Ներդնել ավագանու անդամներին տրամադրվող փոխհատուցումների հաշվետվողականության մեխանիզմներ:

Երևանի քաղաքապետարանում բարեվարքության պահանջների վերաբերյալ առաջարկություններ

- Հանրային ծառայության մասին և հարակից օրենքներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ, ավագանու էթիկայի կանոնների սահմանման պահանջի մասով:

- Համայնքի ավագանու անդամների վարքագծի կանոնագրքի նախագծի մշակում

- Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ, ավագանու էթիկայի հանձնաժողով ձևավորելու և մոդելի սահմանման մասով:

- Համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում, ՏԻՄ մասին ՀՀ օրենքի նոր նախագծի մշակման գործընթացում դիտարկել համայնքի ավագանու ինստիտուտի կարգավիճակի հարցը՝ որոշակի անձեռնմխելիության, լրիվ վարձատրության դրույքով գործելու ապահովումը:

- Հանրային պաշտոն և ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մասով բացառել ավագանու անդամի պաշտոնի համատեղումը:

- Գնումների մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում համայնքի ղեկավարի,տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի, ավագանու անդամների և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների համար քաղաքապետարանի գնումների գործընթացին մասնակցության արգելքի սահմանում:

- Օրենսդրությամբ բարեվարքության հարցերով կազմակերպչի կարգավիճակի վերանայում՝ համայնքային ծառայության ղեկավարի կամ նրա տեղակալի կարգավիճակի սահմանում:

- Երևան համայնքի համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց մասով կիրառելի դարձնել ԿԿՀ-ի կողմից պաշտոնատար անձանց համար հաստատված վարքագծի կանոնագիրքը:

- Վերանայել համայնքային ծառայողների մասնագիտական գործունեության և աշխատակազմի կայունության ապահովման օրենսդրական կարգավորումները՝ բացառելով համայնքային ծառայողների նոր կազմի ձևավորումը համայնքային իշխանության փոփոխության պայմաններում:

- Կոռուպցիայի կանխարգելման մասին ՀՀ օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որով համայնքային հայեցողական պաշտոնյաների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու վարքագծի կանոնների խախտումների քննության ու լուծման հարցերը վերապահվեն ԿԿՀ-ին:

- Օրենսդրորեն շահերի բախման իրավիճակում կնքված համայնքային գնումների պայմանագրերը առ ոչինչ ճանաչելու, արդեն իսկ կնքված պայմանագրերի իրականացումից ստացված օգուտները բռնագանձելու պատասխանատվության միջոցների սահմանում:

- Շահերի բախման իրավիճակների բացահայտման ընթացակարգերի սահմանում՝ համայնքային գնումների, թույլտվությունների, գույքի օտարման ու վարձակալության պայմանգրերի կնքման գործընթացներում:

- Քաղաքապետարանում համայնքային ծառայողների և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման իրավիճակների արձանագրման ռեեստրի (գրանցամատյանի) ստեղծում և վարում - շահերի բախման հայտարարությունների ձևաթղթերի ստեղծում, շահերի բախման իրավիճակների վիճակագրության ձևավորում, դեպքերի վերլուծություն, էլեկտրոնայնացման հնարավորության դիտարկում:

- Քաղաքապետարանում անանուն թեժ գծերով, մամուլի հրապարակումների, սոցիալական ցանցերի տեղեկատվության հիման վրա համայնքային ծառայողների, համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա անհամատեղելիության պահանջների, այլ

սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ ծառայողական քննությունների կամ վարույթների կազմակերպում:

- Անանուն հաղորդումներում պարունակվող տվյալների քննարկման կարգի և մոտեցումների սահմանում:

- Քաղաքապետարանի կայքէջում բարեվարքության հարցերով կազմակերպչի, քաղաքապետարանի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի և ավագանու էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ առանձին բաժնի ստեղծում, ներառելով հանձնաժողովի անդամներին, բարեվարքության հարցերով կազմակերպչին հասանելիության տվյալները, ինչպես նաև անանուն հաղորդումներ ներկայացնելու հնարավորություն:

- Բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մեթոդական աջակցության նյութերի, ձեռնարկների մշակում և տրամադրում, վերապատրաստման դասընթացների իրականացում: